



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail:

info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

08.11.2021թ.

Արմավիրի մարզպետ
Պարոն Համբարձում Մաթևոսյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

E-mail: grisha.balasanjan@hetq.am

Հարգելի պարոն *Մաթևոսյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Արմավիրի մարզպետարանում վերջին անգամ ե՞րբ է տեղի ունեցել մարզխորհրդի նիստ և ի՞նչ օրակարգով: ***Խնդրում եմ տրամադրել վերջին նիստի օրակարգը:***
2. Մարզպետարանի պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվության համաձայն մարզխորհրդի նիստի վերաբերյալ վերջին հայտարարությունը թվագրված է 30.01.2020թ-ին: Եթե դրանից հետո խորհրդի նիստեր չեն հրավիրվել, ինչու՞, ի՞նչ պատճառաբանությամբ:
3. Եթե 30.01.2020թ. խորհրդի նիստից հետո հրավիրվել են մարզխորհրդի նիստեր, ապա երբ, քանի անգամ և դրանցից քանիսն է կայացել: ***Խնդրում եմ տրամադրել նշված ամսաթվից հետո հրավիրված մարզխորհրդի բոլոր նիստերի օրակարգերը:***
4. Եթե 30.01.2020թ.-ից հետո հրավիրվել են մարզխորհրդի նիստեր, ապա ինչո՞ւ այդ մասին հայտարարություններ հրապարակված չեն մարզպետարանի կայքէջում:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ **Գ. Բալասանյան**